ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2012 թվականի N 650 – Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 912-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները՝

1) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 33.1-ին և 33.2-րդ կետերով.

«33.1. Սահմանել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների սպասարկման և պահպանման համար կադաստրային արժեքով օտարվող հողամասերի առավելագույն չափ՝

ա) ինքնակամ կառուցված բնակելի տների և այգետնակների համար՝ 1000 քառ. մետր,

բ) հասարակական նշանակության կառույցների համար՝ ինքնակամ կառույցով զբաղեցված տարածքի մակերեսի կրկնակին,

գ) արտադրական նշանակության կառույցների համար՝ ինքնակամ կառույցով զբաղեցված տարածքի մակերեսի եռակին:

33.2. Որոշմամբ հաստատված՝ ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 33.1-ին կետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի տրամադրման դեպքերում ավելի մակերեսով հողամասի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային արժեքի եռապատիկի չափով:».

2) 34-րդ կետը «կադաստրային արժեքով» բառերից հետո լրացնել «, իսկ սույն կարգի 33.1-ին կետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի տրամադրման դեպքերում՝ կադաստրային արժեքի եռապատիկի չափով» բառերով.

3) 35-րդ կետի «ե» ենթակետը «կադաստրային արժեքի» բառերից հետո լրացնել «, իսկ սույն կարգի 33.1-ին կետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի տրամադրման դեպքերում՝ կադաստրային արժեքի եռապատիկի» բառերով.

4) 36-րդ կետը «կադաստրային արժեքը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն կարգի 33.1-ին կետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի տրամադրման դեպքերում՝ կադաստրային արժեքի եռապատիկը» բառերով.

5) 41-րդ կետը «կադաստրային արժեքով» բառերից հետո լրացնել «, իսկ սույն կարգի 33.1-ին կետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի տրամադրման դեպքերում՝ կադաստրային արժեքի եռապատիկով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
Երևան

MAR-650.doc